Հավելված
ՀՀ փոխվարչապետի N 350 - Ա
որոշման

ԾՐԱԳԻՐ

«ԱՐԵՎԱՅԻՆ ՋՐԱՏԱՔԱՑՈՒՑԻՉ ՍԱՐՔԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻՑ ՏԵՂԱՀԱՆՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ»

1.	Ծրագրի նպատակը	Աջակցել Հայաստանի տարածքում գտնվող Լեռնային Ղարաբաղից տեղահանվածներին՝ նրանց բնակելի տարածքներում տեղադրելով 100 հատ արևային ջրատաքացուցիչ սարքեր, դրանով իսկ ապահովելով նրանց անվճար տաք ջուր ունենալու հնարավորությունը: Արևային ջրատաքացման սարքերը կփոխանցվեն անհատույց օգտագործման իրավունքով, քանի դեռ Լեռնային Ղարաբաղից տեղահանված մեր հայրենակիցները Հայաստանում են, երկրից դուրս գալու դեպքում սարքերը կապամոնտաժվեն և կհանձնվեն հերթում գտնվող հաջորդ ընտանիքներին պահպանելով քանակը՝ 100 հատ:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Օրենքով սահմանված կարգով օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարների գծով արտոնություններից:
3.	Բարեգործը	«Վիվա» բարեգործական հասարակական կազմակերպություն (քաղ. Երևան, Կոմիտասի պողոտա 24/3-48, ՀՎՀՀ՝ 00167517)
4.	Ծրագիրը կատարողը	«Վիվա» բարեգործական հասարակական կազմակերպություն (քաղ. Երևան, Կոմիտասի պողոտա 24/3-48, ՀՎՀՀ՝ 00167517)
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Լեռնային Ղարաբաղից տեղահանված անձանց կողմից վարձակալվող 100 բնակելի տարածքներ Հայաստանի Հանրապետության բոլոր մարզերում, որոնք ունեն տաք ջրամատակարարման հետ կապված խնդիրներ: Բնագավառը՝ սոցիալական
6.	Ծրագրի բյուջեն	66,000,000 դրամ
7.	Բարեգործություն ստացողը	Լեռնային Ղարաբաղից տեղահանված անձինք

8.	Ծրագրի իրականացման տևողությունը	2024 թվականի մայիսի 2-ից մինչև 2025 թվականի մայիսի 30-ը
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	1) 100 հատ արևային ջրատաքացուցիչ սարքի ձեռքբերում և տեղադրում՝ արժեքը կազմում է շուրջ 55,000,000 դրամ. 2) ծրագրի տեղեկատվական ուղեկցում, մամուլի ասուլիսների և կլոր սեղանների անցկացում (դահլիճի վարձույթ, ֆուրշետ, լուսանկարահանում, տեսանկարահանում, սարքավորումների վարձույթ, համաժամանակյա թարգմանություն)՝ 2,000,000 դրամ, նախատեսվում է իրականացնել մայիս և օգոստոս ամիսներին. 3) ծրագրի բրենդավորված տարրերի պատրաստում (տպագիր նյութեր, բրենդավորված գրասենյակ, բաներային արտադրանք)՝ 1,000,000 դրամ, նախատեսվում է իրականացնել մայիս ամսին. 4) ծրագրի շրջանակներում բովանդակության մշակում (ֆոտո և վիդեո նկարահանում)՝ 2,000,000 դրամ, նախատեսվում է իրականացնել ծրագրի ամբողջ ընթացքում. 5) տրանսպորտային, էքսպեդիցիոն և գործառնական ծախսեր, տեղափոխում կապալառուների միջոցով տեղադրման վայրեր, համաժողովների/քննարկումների համար շահառուների տեղափոխում, ծրագրի համակարգողների բջջային կապ, վառելիք և ծախսվող նյութեր՝ 2,000,000 դրամ, նախատեսվում է իրականացնել ծրագրի ամբողջ ընթացքում. 6) հյուրանոցային ծառայությունների ձեռքբերում և կացարանի վարձակալություն՝ 2,500,000 դրամ, նախատեսվում է իրականացնել ծրագրի ամբողջ ընթացքում. 7) վարչական ծախսեր՝ գրենական պիտույքներ, գրասենյակի և կացարանի կոմունալ և կենցաղային վճարումներ՝ 1,500,000 դրամ նախատեսվում է իրականացնել ծրագրի ամբողջ ընթացքում: Ընդհանուր՝ 66,000,000 դրամ:
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	1) 100 հատ արևային ջրատաքացուցիչ սարքի ձեռքբերում և տեղադրում՝ արժեքը կազմում է շուրջ 55,000,000 դրամ. 2) ծրագրի տեղեկատվական ուղեկցում, մամուլի ասուլիսների և կլոր սեղանների անցկացում (դահլիճի վարձույթ, ֆուրշետ, լուսանկարահանում, տեսանկարահանում, սարքավորումների վարձույթ, համաժամանակյա թարգմանություն)՝ 2,000,000 դրամ, նախատեսվում է իրականացնել մայիս և օգոստոս ամիսներին.

		3) ծրագրի բրենդավորված տարրերի պատրաստում (տպագիր նյութեր, բրենդավորված գրասենյակ, բաներային արտադրանք)՝ 1,000,000 դրամ, նախատեսվում է իրականացնել ապրիլ ամսին. 4) ծրագրի շրջանակներում բովանդակության մշակում (ֆոտո և վիդեո նկարահանում)՝ 2,000,000 դրամ, նախատեսվում է իրականացնել ծրագրի ամբողջ ընթացքում. 5) տրանսպորտային, էքսպեդիցիոն և գործառնական ծախսեր, տեղափոխում կապալառուների միջոցով տեղադրման վայրեր, համաժողովների/քննարկումների համար շահառուների տեղափոխում, ծրագրի համակարգողների բջջային կապ, վառելիք և ծախսվող նյութեր՝ 2,000,000 դրամ, նախատեսվում է իրականացնել ծրագրի ամբողջ ընթացքում. 6) հյուրանոցային ծառայությունների ձեռքբերում և կացարանի վարձակալություն՝ 2,500,000 դրամ, նախատեսվում է իրականացնել ծրագրի ամբողջ ընթացքում. 7) վարչական ծախսեր՝ գրենական պիտույքներ, գրասենյակի և կացարանի կոմունալ և կենցաղային վճարումներ՝ 1,500,000 դրամ նախատեսվում է իրականացնել ծրագրի ամբողջ ընթացքում: Ընդհանուր՝ 66,000,000 դրամ:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	1. Հյուրանոցային ծառայությունների ձեռքբերում և կացարանի վարձակալություն՝ 2,500,000 դրամ: 2. Տեղեկատվական միջոցառումների կազմակերպում ՝ 5,000,000 դրամ, (ծրագրի տեղեկատվական ուղեկցում, մամուլի ասուլիսների և կլոր սեղանների անցկացում (դահլիճի վարձույթ, ֆուրշետ, լուսանկարահանում, տեսանկարահանում, սարքավորումների վարձույթ, համաժամանակյա թարգմանություն), ծրագրի բրենդավորված տարրերի պատրաստում (տպագիր նյութեր, բրենդավորված գրասենյակ, բաներային արտադրանք), ծրագրի շրջանակներում բովանդակության մշակում (ֆոտո և վիդեո նկարահանում): 3. Վարչական ծախսեր՝ գրասենյակի և կացարանի կոմունալ վճարումներ՝ 1,500,000 դրամ: 4. Տրանսպորտային, էքսպեդիցիոն և գործառնական ծախսեր՝ 2,000,000 դրամ: Ընդհանուր՝ 11,000,000 դրամ:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական	Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն, մարզպետարաններ, համայնքապետարաններ:

	ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված՝ բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով լիազորված մարմին հաշվետվությունների ներկայացում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

17.05.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ